Australian Government

COVID-19 VACCINATION

Ինչպե՞ս զրուցել երեխաների հետ COVID-19-ի դեմ պատվաստանյութերի մասին

Վերջին անգամ թարմացվել է՝ 8 օգոստոսի, 2022թ.

Պատվաստումը խորհուրդ է տրվում նաև 6 ամսականից մինչև 4 տարեկան որոշ երեխաների համար, ովքեր ունեն խիստ իմունային անբավարարություն կամ ունեն հաշմանդամություն, ինչպես նաև նրանց, ովքեր ունեն բարդ և/կամ բազմաթիվ առողջական խնդիրներ, որոնք մեծացնում են ծանր COVID-19-ի վտանգը: Բնական է, որ ձեր երեխան հետաքրքրասեր լինի և շատ հարցեր ունենա COVID-19-ի դեմ պատվաստումների վերաբերյալ: Ներկայացնում ենք մի քանի խորհուրդներ, երբ զրուցեք երեխաների հետ պատվաստում ստանալուց առաջ և հետո:

Կարևոր է տեղեկացված լինել COVID-19-ի դեմ պատվաստանյութերի վերաբերյալ խորհուրդների մասին **Առողջապահության և տարեցների խնամքի նախարարության կայքում՝ (Department of Health and Aged Care website)**:

Դուք կարող եք նաև քննարկել COVID-19-ի դեմ պատվաստման հետ կապված ցանկացած մտահոգություն կամ հարց պատվաստում իրականացնող անձի կամ ձեր բժշկի հետ՝ նախքան ձեր երեխան պատվաստում կստանա:

Կարևոր է լսել նրանց պատասխանները և ընդունել ցանկացած մտավախություն, որ նրանք ունեն պատվաստման վերաբերյալ:

- Ասա ինձ, թե ինչ գիտես COVID-19-ի դեմ պատվաստանյութի մասին:
- Նախկինում երբևէ պատվաստվե՞լ ես:

Հավանական է, որ ձեր երեխան նախկինում պատվաստված է եղել, և դա կարող է այնքան էլ վատ չի եղել:

Բացատրեք անկեղծորեն և տարիքին համապատասխան, թե ինչ գիտեք COVID-19-ի դեմ պատվաստանյութի մասին:

Հիշեք, որ երեխաները զգացմունքային ազդանշաններ են ընդունում մեծահասակներից, ուստի վախերի չափից դուրս կիսումը կարող է կառուցողական չլինել և կստիպի ձեր երեխային անհարմար զգալ:

Բացատրեք, որ բժիշկը կամ բժշկական մասնագետը ձեր երեխային մի քանի հարցեր կտա, որ ձեր երեխան ձեռքին ասեղով պատվաստում կստանա (կամ ոտքին, եթե նրանք 6 ամսականից մինչև 5 տարեկան են), որ նրանք փոքրիկ խայթոց կզգան, և որտեղ ասեղը մտել է, հետո կարող է մի փոքր ցավոտ լինել: Վստահեցրեք ձեր երեխային, ասելով, որ բնական է, եթե մի փոքր ցավի ասեղի մտած տեղը և դա նշանակում է, որ դեղը ներգործում է:

Եթե թվում է, որ ձեր երեխան անհանգստացած է պատվաստվելուց, փորձեք պարզել նրա զգացումների մասին կամ անհրաժեշտության դեպքում կարող եք լրացուցիչ խորհրդատվություն ստանալ ձեր բժշկից:

Պատասխանեք ձեր երեխաների հարցերին

Երեխաների համար հարմար պատասխաններ պատրաստեք ձեր երեխայի ցանկացած հարցի համար: Մի քանի հիմնական հարցեր և պատասխաններ, որոնք կարող են օգնել ձեզ այս զրույցի ժամանակ.

Եթե կարծում եք, որ դա կօգնի, օգտագործեք իրական օրինակներ, ինչպիսիք են՝ այն կպաշտպանի երեխայի տատիկին ու պապիկին, և երեխան կկարողանա վերադառնալ դպրոց և թիմային սպորտին:

Ավստրալիայում դրանք մանրակրկիտ փորձարկվել են վարչության կողմից, որը ապահովում է բոլոր դեղերի անվտանգությունը: Դրանք չէին տրվի մարդկանց, եթե ապահով չլինեին:

Եթե ձեր երեխան վախենում է ասեղներից, արդյունավետ նախապատրաստման և շեղելու միջոցները կարևոր են:

5 և բարձր տարիքի երեխաների համար, կարող է օգնել ավելի փոքր, ավելի ծանոթ վայր հաճախելը, օրինակ՝ տեղական դեղատուն կամ բուժող բժշկին: Պատվաստումների լայնամասշտաբ վայրերը կարող են բարձրաձայն և մարդաշատ լինել և մեծացնել անհանգստությունը:

Բերեք ձեր երեխայի սիրելի խաղալիքները կամ գրքերը՝ դրական զգացում առաջացնելու և ուշադրությունը շեղելու համար:

Նախապես տեղեկացրեք պատվաստում իրականացնողին, եթե ձեր երեխան վախենում է ասեղներից, որպեսզի նրանք կարողանան բավականաչափ ժամանակ հատկացնել և համոզվել, որ գործընթացը հապճեպ կամ հարկադրված չէ:

Դուք կարող եք այցելել Առողջապահության և տարեցների խնամքի նախարարության կայքը՝ (Department of Health and Aged Care website) www.health.gov.au պատվաստանյութի մասին հավելյալ տեղեկատվության համար:

Կարող եք զանգահարել National Coronavirus և COVID-19 Vaccine Helpline **1800 020 080** հեռախոսահամարով: Սեղմեք տարբերակ 8 անվճար թարգմանչական ծառայությունների համար:

Եթե դուք խուլ եք կամ ունեք լսողության կամ խոսքի խանգարում, կարող եք զանգահարել National Relay ծառայություն **133 677** հեռախոսահամարով: